բան, վերադարձաւ Կիլաբ ամրոցը եւ տիրեց Նորան։

Ռաշիդ գրեց Աբբաս ի. Ջաբիր ի. Եղիդ ի. Ջաբիր ի. Աբդուլլահ Բաջալիին Հայաստանի վերայ. Պարտաւ գալիս Նորա վերայ յարձակեցան Փայտակարանի բնակիչք, եւ նա ստիպուած եղաւ պաշտպանուիլ նոցանից Պարտաւի պարիսպներում, ուղարկելով Եմեսացի Մադանին 6000 զօրքով Աբու Մուսլիմի դէմ. երկու բանակներ միմեանց բախեցան եւ ճակատեցան. Եմեսացի Մադան սպանեցաւ, իսկ Աբու Մուսլիմ գնաց պաշարեց Դուին չորս ամիս շարունակ, ապա վերադարձաւ Փայտակարան եւ մնաց այնտեղ, միանգամայն իշխելով Հայաստանի վերայ։

Ռաշիդ ուղարկեց Եահեայ Հարաշին 12,000 զօրքով եւ Եզիդ ի։ Մազեադ Շայբանիին՝ 10,000 զօրքով, հրամայելով վերջինիս յարձակիլ Հայաստանի, իսկ առաջինին՝ Ատրպատականի վերայ, որին կ'տիրեր Մուհալհալ Տամիմին. Հարաշին պատերազմեցաւ Նորա հետ, ի փախուստ դարձրեց Նորան եւ խաղաղացրեց երկիրը։ Ապա գնաց Հայաստան՝ Եզիդ ի. Մազեադի հետ միանալու Աբու Մուսլիմ Շարիի դէմ մղած պատերազմում. սակայն երբ նա տեղ հասաւ, Աբու Մուսլիմ մեռաւ, որին փոխարինեց Սական ի. Մուսայ Փայտակարանցին... (անունն պակասում է) ստրուկը. Նորա բնակատեղն էր Փայտակարան։ Լուր առնելով Եահեայ Հարաշիի գալստեան մասին, նա ուղարկեց Նորա դէմ Խալիլ ի. Սականին բնտիր հեծելազօրով հանդերձ. Հարաշին ճակատեցաւ Նորա հետ, դերեց Նորան եւ արշաւեց Փայտակարան. երբ այս գոյժը հասաւ Սականին, նա փախստեամբ ապրեցաւ Կիլաբ ամրոցը։ Փայտակարանի բնակիչք եկան Հարաշիի մօտ ողբասանօք՝ շնորհել նոցա ներում, նա մտաւ նոցա հետ քաղաք, ներեց նոցա եւ քանդել տուեց քաղաքի պարիսպները։ Իսկ Սական գնաց Եզիդ ի. Մազեադի մօտ 8000 զօրքով, խնդրելով Նորա հո-